

### ԲԱՐՈՅԵՎԻՊ

**Միրզայի տեսիլքը, նկարագիր մարդկային  
կենաց :**

Լուսնին հնգետասաներորդ օրը, զոր  
ըստ սովորութեան նախահարցոց միշտ  
սուրբ կը պահէի, լուացուելին ետքը  
առաւօտեան աղօթքս կատարեցի, ու  
վերջէն Պաղտատու բարձր լեռնելը ե-  
լայ, որպէս զի օրուան մնացած մասն  
ալ հոն անցրնեմ խոկմութ և աղօթ-  
քով։ Երբ երանց գագաթներուն վը-  
րայ միայնակ ժուռ կու գայի, խորին  
մտածմունք մը պաշարեց զիս մարդ-  
կային կենաց ունայնութեանը վրայ,  
ու խորհրդէ խորհուրդ թափառելով  
ես ինձի կըսէի թէ իրաւցընէ մարդո  
ուրիշ բան չէ՝ բայց եթէ ստուեր մը,  
իսկ կեանքն ալ՝ երազ մը։ Ո՞ինչքեռ  
այս մտածմանց մէջ էի, աշուրներս  
դարձուցի ժայռի մը կատարը, որ ինձ-  
մէ շատ հեռու չէր, ու հոն մարդ մը  
տեսայ հովուի կերպարանքով և ձեռքն  
ալ պղտի նուագարան մը։ Երբոր այս-  
պէս իրեն կը նայէի, շրթանցը մօտե-  
ցուց նուագարանն ու սկսաւ չալել։  
Զայնն այնպէս քաղցր էր, և այնպիսի  
անգատմելի ներդաշնակութիւն մը կար  
եղանակներսւն մէջ, այնպիսի գեղեցիկ  
զանազանութիւն մը, որուն նմանը եր-  
բէք չէի լսած։ միտքս եկան այն եր-  
կնային նուագները, որոնցմով կ'ընդու-  
նուին արդարոց հոգիքը՝ երբ առաջին  
անգամ արքայութիւն կը մտնեն, որ-  
պէս զի իրենց վերջին հոգեվարքի ա-  
տեն ունեցած տպաւ որութիւնները կա-  
մաց կամաց ջնջուին, և վարժին այն  
փափկութեան զրախտին գրգանացը։  
Ոիրտս կը հալէր գաղտնի զմայլմամբ  
մը։

Ծառ անգամ լսեր էի թէ այն զի-  
մացի ժայռը ապաւէն է ոգւոյ մը, և  
որոնք որ անոր մօտէն կ'անցնին, այն  
երաժշտութենէն կը բանուին։ բայց  
ոչ երբէք լսեր էի որ այն երաժիշտն  
ինքը անոնց ցուցընէ։ Երբ այս

յափշտակիւ եղանակներուլս ոգիքս կը  
դրգուռեին անոր հետ խօսակցելու հա-  
ճոյից Ճաշակն առնուլ, ու ապշած կը  
նայէի իրեն, նշան տուաւ ինձի, ու  
ձեռքով ցուցուց որ իր նստած տեղույն  
մօտենամ։ Վովլը գնացի՝ գերագոյն  
ընութեան մը արժանաւոր յարգանքն  
ընելով։ և որովհետեւ սիրտս բալորովին  
այն սրտառուուչ եղանակներէն յափշտա-  
կուած էր, ոտքն ինկայ ու լալ սկսայ։  
Խակ այն ոգին խանդաղատեցաւ վրաս  
գթալից աչքով ու սիրողաբար, որով  
երեակայութիւնս հանդարտեցաւ, ու  
միանգամայն ֆարատեցաւ ինձմէ բոլո-  
րովին այն վախը, զոր քովլը մօտենալու  
ատենս ունէի։ Դեմսնէն վեր առաւ  
զիս, և ձեռքէս բռնած։ Ոիրզա, ը-  
սաւ, քու առանձնախօսութիւններդ ի-  
մացայ, ետեւէս եկուր ։

Ոյն ատեն առաւ զիս ու ժայռին  
ամենէն բարձր գագաթը հանեց, և  
ետքէն ըսաւ ինձի։

— “ Դէպ ՚ի արեւելք դարձուր ա-  
չուրներդ, ու զրուցէ ինձի թէ ինչ կը  
տեսնես ։”

— “ Ո՞էկ ընդարձակ ձոր մը կը տես-  
նեմ, ըսի, և ահաւոր հեղեղ մը՝ որ ա-  
նոր մէջէն թաւալգլոր կը վազէ ։”

— “ Տեսած ձորդ, ըսաւ, թշուա-  
ռութեան հովիսն է, և այն հեղեղն  
ալ՝ զոր կը տեսնես՝ յաւիտենականու-  
թեան ընդարձակ հեղեղին մէկ մասն  
է ։”

— “ Ի՞նչ է արդեօք պատճառը,  
հարցուցի, որ այս տեսած հեղեղս մէկ  
խիտ մառախուզի մը մէջէն ելլելով կը  
կորսուի նորէն թանձր մռայլի մը մէջ ։”

— “ Տեսածդ, ըսաւ, յաւիտենա-  
կանութեան այն մասն է, որ յամա-  
նակ կը կոչուի, զոր արեգակը կը չափէ,  
և աշխարհիս հետ սկսելով ինչուան ա-  
նոր վերջը պիտի տեւ ։”

— “ Հիմա դիտէ, ըսաւ ինձի, սա ծո-  
վը, որ ամէն կողմէն խաւարով պատած  
է, և ըսէ ինձի թէ հոն ինչ կը տես-  
նես ։”

— “ Կամուրջ մը կը տեսնեմ, ըսի,  
որ այն հեղեղին վրայէն ձգուած է ։”

— “ Այս կամուրջը , ըստու , մարդկային կեանքն է . ուշագրութեամբ դիտե զայն , :

Խրկայն բարակ դիտելէն վերջը՝ տեսայ որ այն կամուրջը վաթմուն կամարի վրայ կեցած էր . անոնցմէ զատ՝ շատ մը կիսակործան կամարներ ալ կային , որոնք առաջիններուն հետ մէկտեղ հարիւրի կը հասնէին : Քանի որ այն կամրջին կամարները համբելու վրայ էի , ըստ ինձի այն օգին՝ թէ առաջ այս կամուրջը հազար կամարով էր , բայց ետքը սաստիկ հեղեղ մը եկաւ ու մէկ մասը տարաւ , և այսպէս կիսակործան թողուց զայն , ինչպէս որ հիմա կը տեսնես :

— “ Իայց ըսէ ինձի դարձեալ , կրկնեց նորէն , ինչ կը տեսնես այդ կամրջին վրայ , :

— “ Իազմութիւն մարդկանց կը տեսնեմ , պատասխանեցի , որ անոր վրայէն կ'անցնին , և ծայրերուն վրայ ալ ու ու ամպէր կախուած , :

Խրբ ուշի ուշով կը նայէի , տեսայ որ անցորդներէն շատերը կամրջին վրայէն տակի հեղեղին մէջ կը գլորէին . և աղէկ մը դիտելով՝ աեսայ որ կամրջին վրայ անթիւ ծածուկ դարաններ կային , և անցորդները հազիւ թէ ոտքերնին կամուրջ կը գնէին , մէկէն այն դարան ներէն հեղեղին մէջ կ'իյնային ու շուտ մը աներեսոյթ կ'ըլսային : Աւ այս ծածուկ դարանները կամրջին զլուխն այնափի շատ էին , որ այն խառնիճաղանձքազմութիւնը հազիւթիւնը հազիւթիւնը համարէն դուրս կ'ելլէր ու ոտքը կամուրջ կը գնէր , անցոնցմէ շատը մէկէն այն դարաններուն մէջ կ'իյնէին : Կամրջին մէջտեղուանքը՝ աւելի նուազ էին այս դարանները , բայց միւս ծայրին վրայ ալ դարձեալ բազմաթիւ էին :

Իրաւ կային մարդիկ , թէպէտ սակաւաթիւ , որ կործանած կամարներուն վրայէն կաղալով կ'երթային , բայց անոնք ալ ճամբուն երկայնութենէն յոգնած դադրած , ետեւ ետեւ հեղեղին մէջ կ'իյնային ու կը կորսուէին :

Այս զարմանալի շենքը իր վրայի

այլ և այլ առարկաներովն երկար ատեն դիտեցի : Վիրտոս խորին տիրութեամք մը լեցուեցաւ , տեսնելով որ այշափի մարդիկ ուրախ զուարթ ընթացքնին առաջ տանելու ատեն յանկարծակի հեղեղին մէջ կը գլորին , և իրենք զիրենք ազատելու համար ձեռուընին ինչ որ գայ նէ անոր . կը պլուին : Ոմանք աչուընին դէպ ՚ի երկինք վերացուցած խորին մաածութեանց մէջ էին , և երբ այսպէս խոկմանց մէջ ընկղմեր էին , սխալ քայլ մը առնելով կ'իյնային ու աներեսոյթ կ'ըլսային . բազմութիւն մըն ալ ջրի պղպջակներու ետեւէ կը դիմէին , որ օգուն մէջ կը փալիլէին , և անոնց աչքին առջև կը պարէին . բայց շատ անգամ երբ կը կարծէին թէ անոնց կը հասնին , ոտուընին սահելով կը գլորէին ու հեղեղին մէջ կ'ընկըզմէին : Այս խառնակութեան տեսարանին մէջ կը տեսնէի որ ոմանք ձեռուընին սուր , ոմանք այլ ինչ՝ վեր վար կը վաղէին կամրջին վրայ , և մէկուն ու մէկալին զարնուելով զանոնք գարաններուն մէջ կը ձգէին , որոնք գուցէ չէին իյնէր անոնց մէջ՝ թէ և դրսուանց անոնց յայտնի նշան մըն ալ չտեսնեն , եթէ այսպէս ուժով ըմբղուէին նէ :

Տեսնելով ոգին որ այս տիսուր տեսարանիս վրայ ուշի ուշով կը նայէի , ըստ ինձի .

— “ Իաւական դիտեցիր զայն . հիմն աչուըններդ ուրիշ տեղ դարձուր , և թէ որ բան մը տեսնես , որ չես հասկընար , հարցուր ինձի , :

« Քիչ մը ատեն դէպ ՚ի վեր նայելէն ետքը , հարցուցի անոր .

— “ Ինչ կը նշանակէին այն թուզուն ներուն մեծ մեծ թափչքը , որ անդադար կը կը դառնան կամրջին վրայ , և ատեն ատեն անոր վրայ կ'իջնան ու կը կենան . անգղներ , յափշտակիչ թուզուններ , տգուաւններ , հոգամաղներ կը տեսնեմ , և շատ մը փեարաւոր արարածներ , ու բազմութիւն թեաւոր տղայոց , որ խմբովին մէջտեղի կամարներուն վրայ կը դարին . :

— “ Այսոնք ուրիշ բան չեն , ըստ ոգին , բայց եթէ նախանձ , ագահութիւն , նախապաշարմունք , յուսահատութիւն , սէր , և ուրիշ անոնց նման հոգեր ու կրքեր , որ մարդուս կեանքը կը տագնապեցընեն . . . :

Հոս խոր հառաջանք մը արձակեցի . “ Աչաղ , ըսի , մարդս ուրեմն ’ի զուր ստեղծուեր է . Բնչպէս աղիտից և թըշուառութեանց ձեռքն է մատնուեր . բոլոր կենացը մէջ կը չարչարուի , և մահը կու գայ ու զինքը կը կլէ . . . : Ոգին գթալով վրաս , հրամայեց որ թողումայս տիսուր տեսարանը .

— “ Ալբաւական է , ըստ , մի դիտեր միայն մարդուս գոյութեան առաջին ասպարէզը , և անոր մուտքն ’ի յափտենականութիւն . այլ դարձուր աչուրներդ գէտ ’ի այն խիտ մառախուզ զին վրայ , ուր հեղեղը իրեն հետ մէկաղ կը տանի մարդկանց այն բազմութիւնը , որ իր մէջն ինկեր են . . . :

Խս այն ատեն դարձայ գէտ ’ի այն կողմն որ ինձի ցուցուց , և չեմ գիտեր թէ արդեօք ոգին աս միջոցիս աչուրներս գերբնական ուժով մը զօրացուց , չէ նէ արդեօք փարատեց մաս մը այն մառախուզէն՝ որ առաջ շատ թանձր ու անթափանցիկ էր , տեսայ որ այն ձորին ծայրը շատ հետուն կը ձգուէր , ու ընդարձակ ովկիանոսի մը մէջ կը բացուէր , ուր ադամանդէ մեծ ժայռ մը կար , որ ծովուն մէջ ասդին անդին կը քալէր և երկու հաւասար մաս կը բաժնէր զայն : Ո’էկ մասը ամազ պատած էր , անոր համար հոն բան մը չիրցայ նշմարել . իսկ միւս մասը լայնատարած ովկիանոս մընէր , ուր անթիւ կղզիներ կային՝ պտուղներով ու ծաղկըներով զարդարուած , և մէջերնին հազարաւոր բազմամանուած փայլուն ծովակներ , որ գէտ ’ի ովկիանոս կը սահէին : Ի՞նոնց մէջ լուսապայծառ հագուստներով մարդիկներ տեսայ , որ զլուխնին պսակ զբած՝ ծառերու տակ կը պտղտէին , աղբւրներու քով կը նստէին , կամ ծաղկեայ բազմոցներու վրայ կը հանգէին . կը լսէի նաև թունոց երգելու , խոխոջածայն

վտակներու , մարդու և նուագարանաց ձայներ ու խառն ներդաշնակութիւն մը : Այս հեշտալի տեսարանիս վրայ կամաց կամաց սիրոս ուրախութեամբ լեցուեցաւ . կը փափագէի արծուոյ թե առնուլ , ու դէպ ’ի այն երջանիկ բնակարանը թռչիլ . բայց ոգին ըստ ինձի .

— “ Հոն երթալու ուրիշ ձամբայ չկայ , բաց ’ի այն մահուան դոնէն , զորն որ միշտ բացուած տեսար կամրջին վրայ : Այդ փայլուն ու կանաչ կղզեակները զոր կը տեմնես՝ բոլոր ովկիանուերեսը կը պատեն , և աչքդ չբաւեր զանոնք համրելու , վասն զի ծովեղերքի աւազէն աւելի բազմաթիւ են . տեսած կղզիներէդ անդին ուրիշ բիւրաւոր կրզ զիներ ալ կան , որոնց բազմութիւնը և ոչ երեակայութիւնդ կարող է ըմբռնելու : Ի՞սոնք ուրիշ բան չեն՝ բայց եթե արդարոց մահուընէ ետև ունեցած բնուակարանին , որոնք ինչ տեսակ առաքինութեանց մէջ , և ինչ աստիճանի առաքինացան նէ , անոնց համեմատ այ կղզիներէն մէկուն մէջ կը թագաւորէն ուր իրենց ախորժակին և կատարելութեանցը համեմատ տեսակ տեսակ հանոյքներ կը գտնեն . իւրաքանչիւր կղզ մէյմէկ արքայութիւն են , անոնց մէջ բնակողաց պատշաճեալ : Ուրեմն , ող Ո’իրզա , այս բնակարանները ձեռք բերելու համար արժանի չեն նեղութիւն և աշխատանք : Ո’իթէ այս կեանք թշուած սեպելու է , որ ամէն յարմամիջոցներ կ’ընծայէ այսպիսի վարձք մընդունելու : Ո’իթէ պէտք է վախնամահուընէ , որ զքեզ այսպիսի երջանի վիճակի մը պիտի հասցընէ : Գիտցիր որ մարդս զուր տեղ չէ ստեղծուած , և այսպիսի յաւիտենականութիւն մը ունի պահուած իրեն համար . . . :

Ի՞նպատմելի ուրախութիւն կը նայէ այն երջանիկ կղզիներուն վրայ : Ա երջ ըսի . “ Կ’աղաշեմ զքեզ , հասկըցուինձի , թէ ինչ գաղտնիք կը ծածկուի այն խաւար ամային տակը , որ ծովու վրայ կը պատէ աղամանդէ ժայռին անդիի կողմը . . . : Ոգին պատախան և շտալով , երկրորդ անգամ դարձայ նոյ

բանն հարցընելու , բայց զինքը քովս  
չգտայ : Ան ատեն աջաւըներս դարձու  
յի այն տեսարանին , զոր առաջ երկայն  
ատեն դիտեր էի . բայց փոխանակ այն  
յորձանապտոյտ հեղեղին , այն կամա-  
րաւոր կամրջին , և այն երջանիկ կղզի-

ներուն , ուրիշ բան չտեսայ՝ բայց եթէ  
Պաղտատու խոր ու երկայնաձիգ ձօրը ,  
որուն կողերուն վրայ շատ մը կովեր ,  
ովհարներ և ուղտեր կ'արածէին :

ԷՏԻՍԼՆ ԱՆԳԼԻԱՅԻ

## ԲՈՆԱՄԻՐԱԿԱՆՔ

### ԲԱՆԱՍԵԴ ԾՈՒԹԻՒՆ

կիև Կառավարին :

- “ **Զինչ** այդ դըղչիւն յանագանիս ի լըճիս .
- “ Դրատրիկ սիրուն , տես զինչ է այդ , : —
- “ **Բաղրէ** են զրացւցին անկեալ ի լցող ընդ ալիս .
- “ **Նընջեամ** մայրիկ , նընջեա հանդարտ : —
- “ **Օինչ** այդ շըշուկ ի ջուրս յախուռն եւ ուժգին .
- “ **ԱՌ** , զանգիտեմ ես , ով գրատրիկ , : —
- “ **Մըշակ** վարէ զհաւատարիմ իւր ըզձին .
- “ **Նընջեամ** , ով մայր , նընջեա քաղցրիկ , : —
- “ **Մըրըրկածուփ** հընչէ ահեղ շառացիւն .
- “ **Լուր** , դըտրիկ , լուր ըզվայս եւ կոծ , : —
- “ **Վըրգի** ձըկնորսի է եւ թիակացըն ձողփիւն .
- “ **Նընջեամ** , մայրիկ , զերծ ի հոգոց , : —
- “ **ՈՌ** աղէտք , ոՌ վըտանգք , բաց բաց ինձ ըզդուրս
- “ **Օի** բեկանի սիրու ի ծոցիս , : —
- “ **Ե՛ւ** սըրտահար թաղծեալ թըրուաւ ել ի դուրս
- “ **Ճիչ** բարձեալ մայրըն ցաւալիս :
- “ **Ե՛ւ** առ խաղի շամբուտ ափանցն հանդարտիկ
- “ **Դիի** անկենդան տարածեալ կայր
- “ **Ե՛ւ** սեաւ խիճին՝ գունաթափեալ եւ ցըրտիկ .
- “ **ՈՌ Տէր** գըթած , դա իմ է այր ...
- “ **Այժմ** , իմ դըտրիկ , նընջել կամիմ այժմիկ արդ ,
- “ **Նընջել** այս զգիշերն ի բուն .
- “ **Կամիմ** նընջել քաղցր եւ յերկար եւ հանդարտ .
- “ **Օանարթնականըն** նընջել քուն , : —